

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Զ Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 53-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «10) հետաքննության մարմնի աշխատակցին, քննիչին օրենքով սահմանված կարգով և դեպքերում հեռացնել քրեական վարույթից.»:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 92.1-րդ հոդվածով.

«Հոդված 92.1. Հետաքննության մարմնի աշխատակցին, քննիչին վարույթից հեռացնելու դեպքերն ու կարգը

1. Քրեական վարույթի ընթացքում օրենքի կոպիտ խախտում թույլ տալու դեպքում դատախազը հետաքննության մարմնի աշխատակցին, քննիչին պատճառաբանված որոշմամբ հեռացնում է տվյալ վարույթից:
2. Սույն հոդվածի իմաստով օրենքի կոպիտ խախտում է՝

1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու հիմնական իրավունքի կամ ազատության խախտումը.

2) այնպիսի արարք դրսևորելը, որը հանգեցրել է ապացույցի անդառնալի կորստի:

3. Մինչդատական վարույթում հետաքննության մարմնի աշխատակցին, քննիչին վարույթից հեռացնելու մասին հսկողություն իրականացնող դատախազի որոշումը հաստատում է անմիջական վերադաս դատախազը:
4. Քննիչը կամ քննչական բաժնի պետը, հետաքննության մարմնի աշխատակիցը կամ պետը վարույթից հեռացնելու մասին հսկողություն իրականացնող դատախազի որոշմանը համաձայն չլինելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում՝ դրա վերաբերյալ գրավոր առարկություններ է ներկայացնում ՀՀ գլխավոր դատախազին կամ նրա տեղակալին, իսկ Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազության դատախազների որոշումների վերաբերյալ՝ Երևան քաղաքի դատախազին:
5. Վարույթից հեռացնելու մասին հսկողություն իրականացնող դատախազի որոշումը ստանալուց հետո, իսկ այդ որոշման վերաբերյալ առարկություն ներկայացնելու դեպքում՝ հսկող դատախազի որոշումը ուժի մեջ թողնելու մասին վերադաս դատախազի որոշումը ստանալուց հետո հետաքննության մարմնի կամ քննչական բաժնի պետը անհապաղ քրեական գործը հանձնարարում է համապատասխանաբար հետաքննության մարմնի այլ աշխատակցի կամ այլ քննիչի:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ

Ա.

ՍԱՐԳՍՅԱՆ